ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Նշվածներից ո՞րն է <<Դեկորատիվ նկարչություն>> տեսակի պարապմունքի առաջադրանք:**

1. էջանիշի ձևավորումը
2. բնապատկերը
3. երկրաչափական քանդակը
4. նատյուրմորտը

2 **Ո՞րը դեկորատիվ, կիրառական արվեստի տեսակ *չէ:***

1. կարպետագործությունը
2. ապակենկարչությունը (վիտրաժ)
3. որմնագորգը (գոբելեն)
4. էստամպը

3 **Ո՞րն է դեկորատիվ հորինվածքի կառուցման առաջնային պահանջը:**

1. համաչափությունների պահպանումը
2. մասնիկների բազմազանությունը
3. կոմպոզիցիայի արտահայտչականությունը
4. գունային համադրությունը /կոնտրաստ/

4 **Ո՞րը <<Բնօրինակից նկարչություն>> տեսակի պարապմունքի փուլ *չէ:***

1. ստվերագծման կուլտուրան
2. հեռանկարի, լույսի և ստվերի կիրառումը
3. զարդանախշի կազմումը
4. տեղադրումը թղթի մեջ

5 **Նշվածներից ո՞րը կերպարվեստի տեսակ *չէ:***

1. գրաֆիկան
2. քանդակագործությունը
3. գեղանկարչությունը
4. թատրոնը

6 **Կերպարվեստի ո՞ր ժանրին է պատկանում թռչունների և կենդանիների պատկերումը:**

1. կենցաղային ժանրին
2. անիմալիստական ժանրին
3. նատյուրմորտին
4. բնապատկերին

7 **Ո՞ւմ կողմից է առաջին անգամ կիրառվել ակադեմիական նկարչության դասավանդման համակարգը:**

1. Դյուրերի
2. Պոլիկլետի
3. Ալբերտիի
4. Միռոնի

8 **Ի՞նչ է կոչվում հատուկ ապակու (սմալտա) գունավոր փոքր քառակուսիներից և այլն կազմված նկարը:**

1. ապլիկացիա
2. գրավյուրա
3. վերատպություն
4. խճանկար

9 **Տրվածներից ո՞րը չի ստեղծվում կիրառական և գեղագիտական միասնությամբ:**

1. բարձրաքանդակը
2. կավե աղամանը
3. արծաթյա գոտին
4. գոբելենը

10 **Ո՞վ է ուսուցման դիդակտիկայի սկզբունքների հեղինակը:**

1. Բրյուլովը
2. Ժան Ժակ Ռուսսոն
3. Պեստալոցցին
4. Կոմենսկին

11 **Նշվածներից ո՞րը գույնի հատկություն *չէ:***

1. տոնը
2. հագեցվածությունը
3. բազմազանությունը
4. լուսեղությունը

12 **Աշակերտի ընգրկվելը ստեղծագործական և մեկնաբանական գործունեության մեջ նրա ո՞ր ունակությունն է զարգացնում:**

1. գեղեցիկը զգալու և պատկերելու
2. առաջխաղացման ձգտումների
3. տարածական պատկերացումների
4. սատարման և կարեկցանքի

13 **Նշվածներից ո՞րն է կերպարվեստի դասավանդման առաջնային խնդիր:**

1. քննադատական մտածողության զարգացումը
2. ինքնահաստատման կարողության ձևավորումը
3. իրապաշտական վերարտադրության ձևավորումը
4. շրջակա միջավայրի գեղագիտական ընկալման զարգացումը

14 **Մատիտով, փայտածուխով, տուշով կամ նույն գույնի ներկով արված նկարը կոչվում է՝**

1. գրաֆիկա
2. զարդարվեստ
3. կոլլաժ
4. գեղանկարչություն

15 **Ի՞նչ է կոչվում այն սպիտակ թուղթը, կամ տախտակը, որը նախատեսված է ներկերը խառնելու և ցանկալի գույն ստանալու համար:**

1. պաստել
2. ներկապնակ
3. շրջանակ
4. մոլբերտ

16 **Որևէ բանի վրա տարբեր զարդապատկերներից (ֆիգուրներից), կտրտված որևէ նյութից և այլն ստեղծված գեղարվեստական պատկերը կոչվում է՝**

1. Փակցանկարչություն (ապլիկացիա)
2. Լիտոգրաֆիա
3. Մանրանկարչություն
4. Օֆորտ

17 **Արևմտյան լուսավորիչներից ո՞րը ներդրում ունի կերպարվեստի դասավանդման մեթոդիկայում:**

1. Թեդդը
2. Յոհանես Բեխեռը
3. Լիոն Ֆեյխտվանգերը
4. Ժան Ժակ Ռուսսոն

18 **Վերածննդի դարաշրջանում նկարչության դասավանդման մեջ ի՞նչն էր համարվում առաջնայինը:**

1. ծեփակերտումը
2. արվեստի պատմությունը
3. գծանկարը
4. գունատեսությունը

19 **Դեկորատիվ արվեստի ո՞ր տեսակի համար է հատկապես անհրաժեշտ ներկարարության արհեստը:**

1. բրուտագործության
2. մետաղի մշակման
3. փայտի գեղարվեստական փորագրության
4. գորգագործության

20 **Ո՞վ է ժամանակակից գոբելենի արվեստի հիմնադիրը Հայաստանում:**

1. Արմինե Կալենցը
2. Կարապետ Եղիազարյանը
3. Հռիփսիմե Սիմոնյանը
4. Սարգիս Մուրադյանը

21 **Նշվածներից ո՞րն է դեկորատիվ, կիրառական արվեստի սինթետիկ բնույթի արտահայտությունը:**

1. ուղղությունների ազդեցությունը
2. կերպարվեստի տարբեր միջոցների համադրումը
3. պատկերագրությունը
4. ձևի և դեկորի փոխներթափանցումը

22 **Ո՞րն է նկարչի ստեղծագործական երևակայության ամենահզոր սկզբնաղբյուրը:**

1. գրականությունը
2. թատրոնը
3. բնությունը
4. գույները

23 **Որո՞նք են հայկական քաղաքային տարազում կրառվող հիմնական գույները** :

1. կապույտը, 2. շագանակագույնը, 3. նարնջագույնը, 4. սպիտակը,
5. մանուշակագույնը, 6. դեղինը

1. 1, 2,3,4
2. 3,5,6
3. 2,4,5,6
4. 1,4,5

24 **Ո՞րն է հայկական տարազի հորինվածքի ամենաբնորոշ առանձնահատկությունը:**

1. զարդանախշը
2. կառուցվածքը (կոնստրուկցիան)
3. նյութը
4. գույնը

25 **Աշխարհահռչակ թանգարաններից որո՞ւմ են առավելագույնս ներկայացվել ու լուսաբանվել տարազի և նորաձևության մեծաքանակ հավաքածուները:**

1. Կիոտոյի հագուստի թանգարան-ինստիտուտում
2. Ֆլորենցիայի Գուչիի թանգարանում
3. Լոնդոնի նորաձևության և տեքստիլի թանգարանում
4. Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում

26 **Ինչպիսի՞ն է ազգային տարազում կիրառվող հիմնական ուրվագիծը:**

1. սեղանաձև
2. ուղիղ
3. լրիվ ընդգրկող
4. ազատ

27 **Ստեղծագործական գործունեության ձևավորման առաջնային նախադրյալներից է՝**

1. հուզազգայական մթնոլորտը
2. ստեղծագործելու միջավայրը
3. հիշողությունը
4. հանրահայտ նկարչի ստեղծագործությունը

28 **Կերպարվեստի ո՞ր տեսակին է պատկանում լինոփորագրությունը:**

1. դեկորատիվ արվեստին
2. քանդակագործությանը
3. գրաֆիկային
4. գեղանկարին

29 **Թափոնի և տարբեր նյութերի համադրությամբ տեխնիկան կոչվում է՝**

1. մոնոտիպիա
2. էստամպ
3. կոլաժ
4. օֆորտ

30 **Ո՞րն է հայկական արևմտյան տարազաձևի ամենաբնորոշ առանձնահատկությունը:**

1. զարդանախշը
2. հարուստ ասեղնագործությունը
3. գոտին
4. գլխի հարդարանքը

31 **Նշվածներից հայկական ավանդական տարազի հորինվածքում ինչպիսի՞ հին զարդանախշից է առավել հաճախ գործածվել:**

1. քառակուսի
2. S-աձև
3. շրջանաձև
4. ռոմբաձև

32 **Աշխարհում ամենահին տիկնիկներից է համարվում մամոնտի ոսկրից պատրաստված մարիոնետ տիկնիկը. որտե՞ղ է այն հայտնաբերվել:**

1. Գերմանիայում
2. Ֆրանսիայում
3. Չեխիայում
4. Իսպանիայում

33 **Ստեղծագործության վերլուծության համար առաջնահերթ ո՞ր կարողությունն է հարկավոր զարգացնել առաջին հերթին:**

1. համադրական դիտարկումը
2. տեսողական ընկալումը
3. վերլուծական մտածողությունը
4. հաղորդակցական կարողությունը

34 **Հայ մեծանուն նկարիչներից ո՞վ Է թատերական հագուստի էսքիզներ կատարել:**

1. Մարտիրոս Սարյանը
2. Արշիլ Գորկին
3. Մինաս Ավետիսյանը
4. Վարդգես Սուրենյանցը

35 **Հին հայկական ավանդական հարսանիքում, որպես ավանդույթ հարսնացուին զարդերի հետ մեկտեղ սկեսուը ուրիշ ի՞նչ էր նվիրում:**

1. կարպետագործ անկողնապարկ
2. ոսկեթել ասեղնագործ կարմիր գոգնոց
3. գլխի հարդարանք
4. սպասք

36 **Որտե՞ղ է սկզբնավորվել տարբեր իրերի պատրաստումը պապիե-մաշեի տեխնիկայով:**

1. Ճապոնիայում
2. Ֆրանսիայում
3. Չինաստանում
4. Գերմանիայում

37 **Հայաստանի ո՞ր թանգարանում են ներկայացվել և ֆոնդերում պահպանվել հայկական տարազի առավել շատ նմուշներ:**

1. Հայաստանի պատմության թանգարանում
2. Էրեբունի թանգարանում
3. Հովհաննես Շարամբերյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանում
4. Երևանի պատմության թանգարանում

38 **Տրվածներից ո՞րն է թեմատիկ հորինվածքի տարր:**

1. ստեղծագործության գուներանգը
2. ստեղծագործության չափը
3. ստեղծագործության նյութը
4. ստեղծագործության սկզբնաղբյուրը

39 **Ուսուցման գործընթացում ո՞րն է դիտակտիկ նյութի կիրառման հիմնական նպատակը:**

1. այլընտրանքային տեղեկատվության աղբյուր ստեղծելը
2. սովորողների պատրաստվածության ստուգումը
3. նպատակաուղղվածության ձևավորումը
4. ճանաչողական մտածողության զարգացումը

40 **Հայաստանում ո՞ր դարաշրջանում է ձևավորվել որմնանկարչությունը:**

1. հելլենիստական
2. ուրարտական
3. միջնադարյան
4. նախնադարյան

41 **Ո՞ր տաճարի բաղնիքում է պատկերված հայկական խճանկարչության առաջին նմուշը:**

1. Էմբատավանք
2. Գառնի
3. Զվարթնոց
4. Արուճ

42 **Ու՞մ անվան հետ է կապված *հելլենիզմ* եզրույթը:**

1. Անատոլի Գեկկերի
2. Ալեքսանդր Մակեդոնացու
3. Բորիս Պիոտրովսկու
4. Արիստոտելի

43 **Ո՞ր թվականին և որտե՞ղ է ձևավորվել Գեղարվեստական շրջիկ ցուցահանդեսների ընկերությունը՝**

1. 1870 թ. Սանկտ Պետերբուրգում
2. 1868 թ. Կիևում
3. 1856 թ. Իրկուտսկում
4. 1879 թ. Մոսկվայում

44 **Նշված հայկական եկեղեցիներից ո՞րն է համարվում բազիլիկ տիպի կառույց:**

1. Գայանե
2. Շողակաթ
3. Երերույք
4. Հռիփսիմե

45 **Ո՞վ է հայ դասական բնանկարի հիմնադիրը:**

1. Մարտիրոս Սարյանը
2. Գևորգ Բաշինջաղյանը
3. Փանոս Թերլեմեզյանը
4. Եղիշե Թադևոսյանը

46 **Ո՞վ է ձևավորել Հայաստանի առաջին հանրապետության թղթադրամը:**

1. Եղիշե Թադևոսյանը
2. Արշակ Ֆեթվաճյանը
3. Ստեփան Աղաջանյանը
4. Հակոբ Հակոբյանը

47 **Ապարանի Վերածնունդ հուշահամալիրը քանի՞ հուշակոթողներից է բաղկացած:**

1. երեկու
2. մեկ
3. երեք
4. չորս

48 **Տրվածներից ո՞րը գեղանկարչության արտահայտչամիջոց *չէ:***

1. գույնը
2. լուսաստվերը
3. հեռանկարը
4. գիծը

49 **Գրիչ, մանրանկարիչ Թորոս Ռոսլինը ո՞ր մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչ է:**

1. Գլաձորի
2. Վասպուրականի
3. Տաթևի
4. Կիլիկյան

50 **Հովնաթանյան նկարչների տոհմի ներկայացուցիչներից ո՞վ է Շուշանիկ Նաղիրյանի դիմանկարի հեղինակը:**

1. Հակոբ Հովնաթանյանը
2. Հովնաթան Հովնաթանյանը
3. Աղաթոն Հովնաթանյանը
4. Նաղաշ Հովնաթանը

51 **Աբովյանի ծննդավայր Քանաքեռ գյուղի վերաբերյալ առաջին հիշատակությունը ո՞ր եկեղեցու գավթի արձանագրության մեջ է հիշատակվում:**

1. Տաթև
2. Հաղարծին
3. Գոշավանք
4. Սանահին

52 **Ո՞վ է Խաչտուր Աբովյանի տուն-թանգարանի բակում տեղադրված հուշարձանի հեղինակը:**

1. Ղուկաս Չուբարյանը
2. Անդրեաս Տեր-Մարուքյանը
3. Արա Հարությունյանը
4. Արա Սարգսյանը

53 **Ո՞վ է Երևանի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակը:**

1. Ղուկաս Չուբարյանը
2. Արա Հարությունյանը
3. Լևոն Թոքմաջյանը
4. Արա Սարգսյանը

54 **Ու՞մ վրձնին է պատկանում «Նաիրայի դստեր հարությունը» կտավը:**

1. Իսահակ Լեվիտանի
2. Վալենտին Սերովի
3. Իլյա Ռեպինի
4. Վասիլի Պոլենովի

55 **Ո՞վ է «Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի» հուշարձանի հեղինակը**

1. Արտաշես Հովսեփյանը
2. Ղուկաս Չուբարյանը
3. Հակով Գյուրջյանը
4. Սարգիս Բաղդասարյանը

56 **Ո՞րտեղ է գտնվում Հովհաննես Այվազովսկու «Իններորդ ալիք» կտավը:**

1. Հայաստանի ազգային պակերասրահում
2. Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերասրահում
3. Թեոդոսիայի Հովհաննես Այվազովսկու անվան պատկերասրահում
4. Սանկտ Պետերբուրգի Ռուսական պետական թանգարանում

57 **Ո՞վ է «Մենք ենք մեր սարերը»(Պապիկ -տատիկ) հուշարձանի հեղինակը՝**

1. Դավիթ Երևանցին
2. Երվանդ Ոսկանը
3. Այծեմնիկ Ուրարտուն
4. Սարգիս Բաղդասարյանը

58 **Ո՞վ է «Խնջույք Քուռ գետի ափին» աշխատանքի հեղինակը:**

1. Ստեփանոս Ներսիսյան
2. Հակոբ Հակոբյան
3. Հովհաննես Այվազովսկի
4. Ստեփան Աղաջանյան

59 **Ո՞վ է հին հունական դիցաբանության պանթեոնի «Արևի Աստվածը»:**

1. Աֆրոդիտեն
2. Հելիոսը
3. Աթենաս-Պալլասը
4. Զևսը

60 **Ո՞վ է «Հանճարն ու ամբոխը» կտավի հեղինակը:**

1. Գևորգ Բաշինջաղյանը
2. Մարտիրոս Սարյանը
3. Եղիշե Թադևոսյանը
4. Փանոս Թերլեմեզյանը

61 **Ո՞ր Աստվածներն են կազմում ուրարատական դիցարանի գերագույն եռյակը:**

1. Վահագն, Անահիտ, Տիր
2. Արամազդ,Անահիտ, Վանատուր
3. Միհր,Նանե,Աստղիկ
4. Խալդի, Թեյշեբա, Շիվինի

62 **Ո՞ր կինոռեժիսորն է նկարահանել «Մոռացված նախնիների ստվերները» ֆիլմը:**

1. Սերգեյ Փարաջանովը
2. Երվանդ Ծատուրյանը
3. Վահան Գալստյանը
4. Լևոն Աբրահամյանը

63 **Ո՞վ է հայկական դիցարանի «Ստորերկրյա աշխարհի Աստվածը»:**

1. Սպանդարամետը
2. Տիրը
3. Միհրը
4. Արամազդը

64 **Համապատասխանեցնել նշված հեղինակներին՝ ըստ մանրանկարչական դպրոցների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա.Սարգիս Պիծակ, բ.Թորոս Տարոնացի, գ. Մարգարե, դ.Գրիգոր Տաթևացի

ա	բ	գ	դ

1. Գլաձորի մանրանկարչության դպրոց
2. Կիլիկյան մանրանկարչության դպրոց
3. Տաթևի մանրանկարչության դպրոց
4. Անիի մանրանկարչության դպրոց

65 **Համապատախանեցնել հետևյալ մայրաքաղաքը ըստ դարաշրջանների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա.Դվինը , բ. Տուշպան, գ. Երվանդաշատը, դ.Անին:

ա	բ	գ	դ

1. Ուրարատական
2. Վաղ միջնադարյան
3. Հելլենիստական
4. Զարգացած միջնադարյան

66 **Համատասխանեցնել քանդակագործների աշխատանքները իրենց գտնվելու վայրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

Ա. Կոմիտասի հուշարձան, 2003, Դավիթ Երևանցի

Բ. Բուլատ Ակուջավա, 2002 թ. Գեորգի Ֆրանգուլյան



Գ. Սասունցի Դավիթ, 1971 թ. Վարազ Սամուելյան

Դ. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 2005 թ. Խաչիկ Ղազանչյան

1. Փարիզ
2. Վատիկան
3. Ֆրեզնո
4. Մոսկվա

ա	բ	գ	դ

67 **Համապատասխանեցնել նշված վարպետներին ըստ ճարտարապետական կառույցների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա. Անիի Մայր տաճար, բ. Նորավանքի Սբ. Աստվածածին եկեղեցի,
գ. Ախթամարի Սբ. Խաչ եկեղեցի, դ.Արատեսի վանքի գավիթը:

1. Սիրանես
2. Տրդատ
3. Մանուել
4. Մոմիկ

ա	բ	գ	դ

68 **Համապատասխանեցնել նշված արվեստագետներին իրենց աշխատանքներին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**



ա.Խորհրդավոր ընթրիք, (1495-1498)

բ. Վեներայի ծնունդը, (1486)

գ.Սիքստինյան Տիրամայրը(1512-1513)

դ. Աղոթող ձեռքեր (մոտ. 1508)

.

1. Ալբրեխտ Դյուրեր
2. Լեոնարդո դա Վինչի
3. Սանդրո Բոտիչելլի
4. Ռաֆայել Սանտի

ա	բ	գ	դ

69 **Համապատասխանեցնել հետևյալ պաշտամունքային կառույցները իրենց գտնվելու վայրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**



ա. Զվարթնոց

բ. Կարմրավոր



Գ. Հռիփսիմե

դ. Օձուն

1. Վաղարշապատ
2. Վաղարշապատից 3 կմ հարավ-արևելք
3. Աշտարակ
4. Լոռի

ա	բ	գ	դ

70

Համապատասխանեցնել դեկորատիվ ստեղծագործությունների անունները իրենց բնութագրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:

ա. ասեղով և թելով գործված ստեղծագործություն

բ. գործվածքի վրա հատուկ նյութերով նկարված ստեղծագործություն

գ. գործվածքի վրա կաղապարի միջոցով և հատուկ նյութերով պատկերված նկարազարդ ստեղծագործություն

դ. գնդասեղներով և թելերի հանգույցներով նախշազարդ ձեռագործ ստեղծագործություն

1. մաքրամե
2. դաջազարդում
3. բատիկ
4. ժանյակ

ա	բ	գ	դ